



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

04 ապրիլի 2019 թվականի թիվ 34-Ն

ք. Երևան

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշում է*.

1. Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2010 թվականի մարտի 12-ի «Հեռուստառադիոընկերությունների հաշվառման մատյանի վարման կարգը հաստատելու մասին» N 2-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրում, Որոշման մեջ և Որոշման Հավելվածի վերնագրում «Հեռուստառադիոընկերությունների հաշվառման մատյանի վարման կարգ» բառերը փոխարինել «Հեռուստառադիոհաղորդումների հաշվառման մատյանում հաշվառման կարգ» բառերով,

2) Որոշման 1-ին պարբերությունում «14» թիվը փոխարինել «13» թվով,

3) Որոշման մեջ և Որոշման Հավելվածում՝ «Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով» բառերը փոխարինել «Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով» բառերով,

4) Որոշման Հավելվածի 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,

5) Որոշման Հավելվածի 5-րդ կետում «և կնքվում են հեռուստառադիոընկերության կնիքով» բառերը փոխարինել «են, կարվում և հաստատվում են հեռուստառադիոընկերության կողմից «Բաղկացած ----- թերթից» գրառմամբ և ստորագրությամբ» բառերով,

6) Որոշման Հավելվածի «Հաշվառման մատյանը վարելու ուղեցույց»-ի 8-րդ պարբերությունից հանել «և հեռուստատադիտընկերության կնիքով» բառերը:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

04 ապրիլի 2019թ.
ք. Երևան